

ANDERSEN®

Հեղինակ՝

Լարիսա Գևորգյան
Գայանե Ղուշյան

Բովանդակություն

Փոխարկելի փոխառություններ և
օպցիոններ. Կորպորատիվ և
ֆինանսական իրավունքի երկու
հիմնական օրենսդրական
զարգացումներ Հայաստանում





Prepared By:

Larisa Gevorgyan
Gayane Ghushchyan



Alert Content:

Convertible Notes and Options: Two Key
Legislative Developments in Armenian
Corporate and Financial Law



Ներածություն	Introduction
Այս հրապարակումն անդրադառնում է կորպորատիվ և ֆինանսական իրավունքի ոլորտում երկու օրենսդրական նախաձեռնությունների (թեև տարբեր փուլերում գտնվող)։	This publication addresses two legislative initiatives in the field of corporate and financial law (albeit at different stages):
- փոխարկելի փոխառության վերաբերյալ փաթեթը, որն ուժի մեջ է մտել 2025 թվականի հունիսի 13-ին (https://www.arlis.am/hy/acts/207705) և	- the package on convertible notes, which entered into force on June 13, 2025 (https://www.arlis.am/hy/acts/207705) and
- օպցիոնների կարգավորման վերաբերյալ փաթեթը, որը հասանելի է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (https://www.e-draft.am/projects/8188/about):	- the package on the regulation of options, as available on the Unified Website for the Publication of Draft Legal Acts (https://www.e-draft.am/projects/8188/about).
Փոխարկելի փոխառություններ	Convertible notes
Փոխարկելի փոխառությունները հիբրիդային գործիքներ են, որոնք համատեղում են կորպորատիվ ֆինանսավորման երկու ավանդական ձևերը՝ պարտքային (debt) և բաժնային (equity) տեսակները: Պարտքային արժեթղթերը, որոնք փոխարկվում են բաժնային գործիքների, լայնորեն օգտագործվում են ստարտափների (start-up) և զարգացող ընկերությունների ֆինանսավորման համատեքստում:	Convertible notes are hybrid instruments combining two traditional forms of corporate finance - debt and equity. Debt securities that convert into equity instruments, they are widely used in financing of start-ups and companies on growth tracks .

Քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների համաձայն՝ փոխառության (փոխարկելի փոխառություն) պայմանագրով կարող է նախատեսվել, որ փոխառության մարման փոխարեն փոխառուն պարտավորվում է փոխատուի օգտին տեղաբաշխել որոշակի քանակի, տեսակի և դասի բաժնետոմսեր:	According to the amendments to the Civil Code, a loan (convertible note) agreement may provide that instead of repayment of the loan, the corporate borrower shall be obliged to distribute to the lender shares of specified quantity, type and class.
<i>Օրենսդրական նախաձեռնությունները նպատակ ունեն սահմանել փոխարկելի փոխառությունների հետևյալ առանձնահատկությունները.</i>	<i>The legislative initiatives aim to establish the following features of convertible notes:</i>
<i>Արտարժույթով փոխարկելի փոխառություններ.</i> Փոխարկելի փոխառությունները կարող են թողարկվել արտարժույթով, սակայն փոխառու լնկերության կանոնադրական կապիտալում կանխիկ դրամական ներդրումները կհամարվեն կատարված ՀՀ դրամով՝ հաշվարկված փոխարկման պահանջը/դիմումը փոխառու լնկերության կողմից ստացված համարվելու օրվա դրությամբ Կենտրոնական Բանկի կողմից հրապարակված՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:	<i>Foreign currency convertible notes:</i> Convertible notes may be issued in foreign currency, but subsequent cash investments into the charter capital of the borrowing Company shall be considered to be made in Armenian drams at the average exchange rate in the currency markets, as published by the Central Bank as of the day when the request/application for conversion is deemed to be received by the borrowing Company.
<i>Բաժնետիրական լնկերությունների կողմից կնքվող Փոխարկելի փոխառության պայմանագրեր.</i>	<i>Convertible note agreements by joint stock companies:</i>

Փոխարկելի փոխառության պայմանագիր կնքելու համար փոխառու բաժնետիրական ընկերության բաժնետերերի ժողովը պետք է միաձայն որոշում ընդունի, եթե կանոնադրությամբ նախատեսված չէ, որ այդպիսի որոշումներն ընդունվում են ձայների 3/4-ով: Պայմանագրով սահմանված ժամկետի կամ պայմանի վրա հասնելու դեպքում փոխատուն ներկայացնում է գրավոր պահանջ, որից հետո՝ 60-օրյա ժամկետում, Ընկերությունը պարտավոր է փոխատուի օգտին թողարկել և տեղաբաշխել փոխարկելի փոխառության պայմանագրով սահմանված տեսակի, դասի և քանակի բաժնետոմսեր:	To enter into a convertible note agreement, the shareholder meeting of the borrower joint stock company shall adopt a unanimous resolution, unless the charter provides that such decisions shall be adopted by 3/4 of the votes. Upon satisfying the term or condition specified in the agreement, the lender submits a written demand, after which, within a 60-day period, the Company is obliged to issue and distribute, in favor of the lender, shares of the type, class and quantity specified in the convertible note agreement.
<i>Սահմանափակ պատասխանատվությամբ Ընկերությունների կողմից կնքվող Փոխարկելի փոխառության պայմանագրեր.</i> Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից կնքված փոխառության պայմանագրերով փոխատու կարող են լինել և՛ ընկերության մասնակիցները, և՛ երրորդ անձինք, եթե Ընկերության կանոնադրությամբ արգելված չէ կանոնադրական կապիտալի ավելացումը երրորդ անձանց ավանդների հաշվին: Փոխարկելի փոխառության պայմանագիր կնքելու մասին որոշումն ընդունվում է ընկերության բոլոր մասնակիցների միաձայն որոշմամբ:	<i>Convertible note agreements by limited liability companies:</i> Both participants and third parties may be lenders under a loan agreement entered into by a limited liability company, unless the company's charter prohibits the increase in charter capital on the account of third-party deposits. The decision to sign a convertible note agreement shall be adopted unanimously by all participants of the company.

Պայմանագրով սահմանված ժամկետում կամ պայմանների բավարարումից հետո փոխատուն դիմում է ներկայացնում ընկերության գործադիր մարմնին: Դիմումը ստանալուց հետո 60 օրվա ընթացքում ընկերությունը պարտավոր է որոշումներ կայացնել ՍՊԸ-ի մասնակցության բաժնեմասերը փոխատուին հատկացնելու վերաբերյալ՝ կապիտալի ներդրման դիմաց, կանոնադրական կապիտալի ավելացման և այլ անհրաժեշտ կորպորատիվ որոշումների վերաբերյալ:	Within the period specified in the agreement or upon satisfaction of the conditions the lender submits an application to the company's executive body, such as the director. Within 60 days after the application is received, the company shall adopt decisions on the allocation to the lender of LLC participation interests in exchange for their capital contribution, the increase of the charter capital, and other necessary corporate decisions.
<i>Օպցիոններ</i>	<i>Options</i>
Օպցիոնի պայմանագիրը օպցիոնի գնորդին տալիս է ապագայում նախապես որոշված պայմաններով գործարք կնքելու բացառիկ իրավունք (բայց ոչ պարտավորություն): Ֆինանսական շուկաներում օպցիոնները կիրառվում են ինչպես ռիսկերի կառավարման՝ հեջավորման, այնպես էլ սպեկուլյատիվ նպատակներով: Այն նաև լայնորեն կիրառվող գործիք է աշխատակիցների բաժնետիրացման ծրագրերում: «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով ներկայումս ածանցյալ ֆինանսական գործիքների ցանկում ընդգրկված օպցիոնները այժմ նախատեսվում է կարգավորել նաև Քաղաքացիական օրենսգրքով. դրանում և դրան կից օրենքներում փոփոխությունների նախագծերը նախատեսում են առավել համապարփակ կարգավորումներ:	An option agreement gives the option buyer the exclusive right (but not the obligation) to enter into a transaction in the future under predetermined conditions. Options are used in financial markets for both hedging and speculative purposes. It is also a widely used tool in ESOPs. Currently included into the list of derivative financial instruments by the RA Law "On Securities Market", options are now making their way into the Civil Code as well: the draft amendments to it and related laws provide for more comprehensive regulations.
<i>Իրավական ակտերի նախագծերը նպատակ ունեն սահմանել օպցիոնի պայմանագրի հետևյալ առանձնահատկությունները</i>	<i>The draft legal acts aim to establish the following features of the option agreement:</i>

<i>Սահմանափակումներ:</i> Ինչպես նշվեց, օպցիոնի պայմանագրի առարկան պայմանագրով նախատեսված գործողությունների կատարումը պահանջելու իրավունքն է (սովորաբար սեփականության կամ այլ գույքային իրավունքների փոխանցում/ընդունում): Միաժամանակ, նախագիծը որոշակի սահմանափակումներ է մտցնում: Մասնավորապես, օպցիոնի պայմանագրերը չեն կարող կարգավորել անշարժ գույքի և ավտոտրանսպորտային միջոցների նկատմամբ նման պահանջների իրավունքները:	<i>Limitations:</i> As highlighted above, the subject matter of an option agreement is the right to claim the performance of the actions stipulated by the agreement (usually transfer/assumption of ownership or other property rights). At the same time, the draft introduces certain restrictions. In particular, option agreements cannot regulate rights to such claims in relation to real estate and motor vehicles.
Բացի այդ, այն գույքը կամ գույքային իրավունքը, որի նկատմամբ օպցիոնի պայմանագրով օպցիոնի գնորդը ձեռք է բերել պահանջի իրավունք, պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում չի կարող փոխանցվել երրորդ անձի:	Additionally, the property or property right to which the option buyer has acquired a right of claim under the option agreement, cannot be transferred to a third party during the term of the agreement.
<i>Գույքի տեսակով պայմանավորված պահանջներ.</i> Նախագիծը սահմանում է, որ օպցիոնի պայմանագիրը պետք է սահմանի օպցիոնի իրացման արդյունքում կնքվելիք համապատասխան տեսակի պայմանագրի բոլոր էական պայմանները: Օրինակ, ոչ փաստաթղթային արժեթղթերի դեպքում օպցիոնի պայմանագիրը պետք է ներառի համապատասխան հաշվարկային համակարգերի և հաշիվների տվյալները:	<i>Requirements based on the type of property:</i> The draft specifies that the option agreement must specify all essential conditions of the relevant type of agreement to be entered into in the result of exercise of the option. For example, in the case of non-documentary securities, the option agreement must include the details of the relevant settlement systems and accounts.
Օպցիոնի պայմանագիրը պետք է նաև սահմանի օպցիոնի պայմանագրի առարկայի	The option agreement must also specify the scope of restrictions in relation to the

հետ կապված գործարքների վերաբերյալ սահմանափակումների շրջանակը: Օպցիոնի առարկա գույքի բռնագանձվելու կամ բռնագրավվելու դեպքում օպցիոնի պայմանագիրը դադարում է: Բացի այդ, եթե դատարան կամ այլ իրավասու մարմինը կիրառում է արգելանք կամ օտարման այլ սահմանափակում, օպցիոնի պայմանագրի հիման վրա գույքի օտարում տեղի չի ունենում: Նշված դեպքերում գույքի սեփականատերը պետք է փոխհատուցի մյուս կողմին պատճառված վնասը, իսկ Քաղաքացիական օրենսգրքի 414-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները (գույքը պահանջելու իրավունքի մասին) չեն կիրառվի:	transactions with the subject matter of the option agreement. In case of seizure/confiscation of the option's subject matter property, the option agreement shall terminate. Additionally, if a court or another competent authority imposes a lien or another restriction on alienation of the property, the property will not be transferred under the option agreement. In such cases, the owner of the property should compensate to the other party any damages incurred and the provisions of Article 414, Part 1 of the Civil Code (on the right to claim property) shall not apply.
<i>ձեռքբերման նախապատվության իրավունք.</i> Այն դեպքում, երբ պայմանագրի առարկա գույքի նկատմամբ առկա է ձեռքբերման նախապատվության իրավունք, այդ իրավունքը ունեցող անձը պետք է գրավոր ծանուցվի օպցիոնի պայմանագրի կնքման մտադրության մասին (ներառյալ՝ օպցիոնի իրացման գնի և այլ պայմանների մասին) նախքան օպցիոնի պայմանագրի կնքումը, և այդ անձը պետք է իրավունք ունենա ձեռք բերելու այդ գույքը օպցիոնի գնով և պայմաններով՝ օրենքով, այլ իրավական ակտով, պայմանագրով, ընկերության կանոնադրությամբ կամ այլ փաստաթղթով սահմանված առաջնահերթության ժամկետի ընթացքում: Հակառակ պարագայում՝ օպցիոնի պայմանագրի համաձայն գույքի փոխանցման դեպքում՝ ձեռքբերման նախապատվության իրավունքը կդադարեցվի:	<i>The right to priority of acquisition:</i> In cases where there is a right to priority (first refusal right) of acquisition of the property subject to the agreement, the person entitled to such right must be notified in writing about the intention to enter into an option agreement (including about the option exercise price and other conditions) prior to the conclusion of the option agreement, and such person shall have the right to acquire the property at the option price and other option conditions within the term of the priority specified by the relevant law, other legal act, contract, company's charter or other document. Otherwise, in the case of the transfer of property pursuant to the option agreement, the right to priority of acquisition will be disapplied.

<i>Պարգևավճար և կատարման գին.</i> Օպցիոնի գնորդը օպցիոնի պայմանագրով նախատեսված գործողությունները կատարելու պահանջի իրավունքի տրամադրման դիմաց օպցիոնի վաճառողին վճարում է պարգևավճար (premium): Օպցիոնի գնորդը այդ վճարումը կարող է կատարել կանխիկ կամ այլ գույքի տեսքով՝ պայմանագրով սահմանված ժամկետում: Պարգևավճարը չի վերադարձվում, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ (ներառյալ, երբ օպցիոնի պայմանագիրը լուծվում է օպցիոնի գործողության ժամկետում դրանով սահմանված պահանջը չներկայացնելու հետևանքով):	<i>Premium and performance price:</i> The option buyer pays a premium to the option seller in exchange for the right to claim performance of the actions specified in the option agreement. The option buyer can make this payment in the form of cash or other property within the period specified in the agreement. The premium is not refundable, unless otherwise provided by law (including when the option agreement is terminated due to failure to submit the claim specified therein during the option's validity period).
Օպցիոնի պայմանագրի մյուս ֆինանսական տարրը կատարման գինն է (և վճարման եղանակը)՝ այն գինը, որով իրականացվելու է պայմանագրի առարկա գործարքը:	The other financial element of an option agreement is the performance price (and its payment method) - the price at which the subject matter transaction be performed.
<i>Պայմանագրի ձևը.</i> Նախագծով նաև սահմանվում է, որ օպցիոնի պայմանագիրը կնքվում է բացառապես գրավոր եղանակով:	<i>Form of the agreement:</i> The draft also provides that an option agreement shall be concluded exclusively in writing.
<i>Իրացման ժամկետ/պայման.</i> Օպցիոնի իրացման ժամկետը օպցիոնի պայմանագրի հաջորդ էական պայմանն է: Նախագիծը նաև թույլատրում է օպցիոնի իրացումը կապել որոշակի պայմանների վրա հասնելու հետ: Այդ դեպքում պայմանագրում պետք է նշվեն այն հանգամանքները, որոնց դեպքում նման պայմանները համարվում են բավարարված, ինչպես նաև համապատասխան	<i>Execution period/condition:</i> The option exercise period is the next essential requisite of an option agreement. The draft also allows to link exercise of the option to certain conditions. In that case, the agreement must specify the circumstances in which such conditions are deemed to be satisfied and the criteria or procedure for determining the relevant date.

ամսաթիվը որոշելու չափանիշները կամ ընթացակարգը:	
<i>Պայմանագրի դադարեցում.</i> Նախագծի համաձայն՝ օպցիոնի պայմանագիրը համարվում է դադարեցված, երբ օպցիոնի գնորդը օպցիոնի վաճառողին է ներկայացնում օպցիոնի պահանջ (համաձայն պայմանագրի): Եթե նման պահանջը չի ներկայացվում օպցիոնի իրացման ժամկետում, ապա պայմանագիրը համարվում է լուծված կատարման ժամկետի ավարտից հետո:	<i>Termination of the agreement:</i> According to the draft, an option agreement shall be considered terminated upon the submission by the option buyer to the option seller of the option claim (as per the agreement). If such claim is not submitted within the option exercise period, then the agreement will be deemed terminated upon the expiration of the execution period.
<i>Հարկային ասպեկտներ.</i> Հարկային նպատակներով օպցիոնի պայմանագրի հիման վրա օպցիոն վաճառողի կողմից օպցիոնային ծառայություն մատուցելու պահ է համարվում - երբ օպցիոնի գնորդը օպցիոնի իրացման ժամկետում ներկայացնում է պահանջը, և - իսկ եթե նման պահանջ չի ներկայացվում, ապա օպցիոնի ժամկետի ավարտի պահը:	<i>Tax aspects:</i> For tax purposes, the moment of providing the option service by the option seller under the option agreement shall be the moment - when the option buyer submits the option claim within the option exercise period and - if such claim is not submitted, then the moment of expiration of the option period.